մեք յանձն առնումք միխիթարութեամբ և այլն, որովհետև խօսք մեր է հաս մինչև չարն Ներօնի կայսերն հռոմայ՝ հարկաւոր համարեցայ ասել մի 'ի պատմութիւն 'ի նոցանէ այսինքն, ոմն պառաւ կին եմուտ առ հայր վարպետ մի փիլիսոփայի, գանգատելով նմայ չարագործութիւն Ներօնէ և պատմէր նմայ պատառումն որովայնի դշխոհուոյն և մօրն կայսեր Ներօնի, վասն տեսանելոյ տեղի բնակութեան իւրոյ, և յոյժ տրտմելով պատմէր գործն չարութեան Ներօնի, յետ համբերութեամբ լսելոյն վարպետիս ամենայն պատմութիւնն պառաւին, հանդարտաբար պատասխանեաց պառաւին ըստ համեմատութեան բնական բնութեան ասելով, այսպէս թուեցաւ ինձ թէ բարեգոյն գտաք մեք Ներօն 'ի գործս իւր գործեցեալ 'ի վերայ մօր իւրոյ պատառելով յորովայն նորայ քանթէ գործ անօրէնութեան մօրն Ներօնի, ծնանելով Ներօն 'ի յաշխարհ և կայսր հռոմու, քանզի եթէ Ներօն պատառեաց յորովայն մօր իւրոյ կատարումն գործոյն միայն եղև վախճան 'ի կենաց մօրն իւրոյ 'ի վերայ աշխարհիս, այլ չարագոյն մայրն նորայ ծնանելով նմայ մարդ յաշխարհ աւերեաց կեանս և պատիւս Ներօնի որդոյ իւրոյ՝ ծնանելով այնպիսի չարագոյն որդի որուն ապականելով անձն, կեանք, հոգի և մարմինն նորայ 'ի յաշխարհի, և պատրաստելով վասն հոգւոյ նորայ անշէջ հուր 'ի գեհենի մշանջենա-